Հիմնավորում

Նախագծի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ

Նախագծի ընդունման նպատակը.

Սույն նախագծով առաջարկվում է բեռնաթափել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանը, ապահովել ողջամիտ ժամկետում արդարադատության իրականացումը,

Հիմնավորումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ իրավակիրառական պրակտիկայում նույնիսկ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի պայմաններում վարչական մարմինները մեխանիկորեն ներկայացնում են վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ, որի պայմաններում առաջանում է ուշացած արդարադատության ծայրահեղ վտանգավոր իրավիճակ և ողջամիտ ժամկետներում գործերի քննության երաշխիքի խախտում:Մասնավորապես, որպես դրա օրինակ կարող ենք նշել այն դեպքերը, երբ անձի նկատմամբ կայացվում է վարչական տույժ ենթարկելու վերաբերյալ միջամտող վարչական ակտ, անձը իր դատական պաշտպանության իրավունքից օգտվելու համար պարտավոր է գործող իրավակարգավորումների համաձայն վճարել պետական տուրք, որը վերջինս կարող է հետ ստանալ բացառապես հայցը բավարարվելու և դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պարագայում, իսկ ներկայումս վերաքննիչ և վճռաբեկ ատյաններում գործի քննության ժամկետը կարող է տևել մի քանի տարի, որը ակնհայտ է որը չի կարող լինել համաչափ, այսինքն, նույնիսկ երբ ակնհայտ ոչ իրավաչափ վարչական ակտ է կայացվել, որի համար անձը ստիպված է եղել դատական կարգով իրավունքների պաշտպանություն իրականացնել և դրա համար վճարել պետական տուրք, ներկա իրավակարգավորումների համաձայն պետական տուրքը անձը կարող է հետ ստանալ առնվազն մի քանի տարի հետո: Նախագծով առաջարկվող մեխանիզմի հիմքում ընկած է նաև միջազգային իրավական փաստաթղթերում օգտագործվող՝ «ուշացած արդարադատությունը մերժված արդարադատություն է» («Justice delayed is justice denied[1,2,3]») գաղափարը, որի համաձայն՝ դատավարության չհիմնավորված ձգձգումը կարող է հանգեցնել «արդարադատության մերժմանը»՝ դատավարության կողմերի համար: Բացի այդ վերաքննության իրավունքը, երաշխիքը մարդու, այլ ոչ վարչական մարմնի անօտարելի իրավունքն է, սակայն այս նախագծով պարզապես սահմանափակվում է վարչական մարմնի, ոչ թե իրավունքի այլ գործիքակազմի իրացումը: Այս առնչությամբ հարկ է նշել, որ նախագծով կկանխվի նաև որոշ վարչական ակտերի վերաբերյալ գործերով պետության կողմից պետական միջոցների անհարկի վատնումը, մասնավորապես քիչ չեն դեպքերը, (տե՛ս օրինակ՝ ՎԴ/6542/05/20, ՎԴ5/0188/05/20, ՎԴ/3615/05/21, ՎԴ/0512/05/21, ՎԴ/7589/05/20 գործեր) երբ 10000 ՀՀ դրամի չափով գումար բռնագանձելու ենթադրվող ակնկալիքով պայմանավորված պետական մարմինները վճարում են 10000 ՀՀ դրամ պետական տուրք, դրան գումարած կատարում են աշխատանք, օգտագործում թուղթ և այլ ռեսուրսներ, որի պայմաններում արդեն նպատակահարմար չի դառնում պետական ռեսուրսների օգտագործումը,

---

[1] https://www.google.com/books/edition/Justice_delayed_is_justice_denied_a_case/p8QsGPvZl_0C?hl=en&gbpv=1&dq=%22Justice+delayed+is+justice+denied%22&pg=PA1&printsec=frontcover

[2] http://cja.gov.in/Latest%20Judgement/11974%20OF%202016.pdf

[3] https://law.justia.com/cases/washington/supreme-court/1951/31184-1.html

առավել ևս COVID-19 համավարակի, ապա դրա ընթացքում նաև զուգահեռաբար պատերազմի ու դրա արդյունքներից հետո առաջացած տնտեսական ճգնաժամի պայմաններում:

Միաժամանակ, նախագծի ընդունումը բխում է ՀՀ Սահմանադրության և ՄԻԵԿ կոնվենցիայով մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքների և ազատությունների, արդար դատաքննության և իր իրավունքների արդյունավետ պաշտպանության սկզբունքներից, որի վառ արտացոլումն է ողջամիտ ժամկետներում մարդու և քաղաքացու խախտված իրավունքների վերականգնումն:

Հաշվի առնելով, որ վարչական իրավահարաբերություններում առկա վարչական ակտերի տեսակները՝ միջամտող, բարենպաստ և այլն, նախագծի հեղինակը զերծ է մնացել ցանկացած դեպքում վերաքննիչ և կամ վճռաբեկ բողոք բերելու մասով առհասարակ արգելքի սահմանումից, քանի որ խոսքը կարող է գնալ գործողության կատարման, պարտավորեցման կամ ճանաչման հայցերի մասին, ինչի պայմաններում այսպիսի արգելքը կարող է և ողջամիտ չլիներ:

Հաշվի առնելով որոշ վարչական իրավախախտումների առանձնահատկությունները, դրանց դրամական արժեքը, դրևսորումը, հանրային վտանգավորությունը և այլն՝ առաջարկվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123-րդ, 123.1-ին, 123.3-րդ, 123.4-րդ, 123.5-րդ, 123.6-րդ, 123.7-րդ, 124-124.4-րդ, 124.6-րդ, 124.7, 125-րդ, 128-րդ, 129.2-րդ, 129.3-րդ, 131-րդ, 132-րդ, 135.2-րդ, 140-րդ, 170.3-րդ հոդվածներով սահմանված արարք ենթադրաբար կատարելու դեպքում կայացված վարչական ակտերի վերաբերյալ գործերով սահմանափակել վարչական մարմինների՝ վերաքննիչ և վճռաբեկ դատարան բողոք ներկայացնելու հնարավորությունը՝ հանուն մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների արդյունավետ իրացման, դրանց պաշտպանության և արդարադատության ամբողջական իրականացման:

Այս առնչությամբ հարկ է նշել, որ բողոքարկման իրավունքը մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքն է, այլ ոչ թե պետության, հետևաբար ՀՀ Սահմանադրության և Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի տեսանկյունից որևէ խնդիր սույն նախագծի ընդունման դեպքում չի լինի:

Միաժամանակ հարկ է նաև նշել, որ սույն նախագծով առաջարկվող դեպքերում վարչական մարմինների՝ վերաքննիչ և վճռաբեկ դատարան բողոք ներկայացնելու հնարավորության սահմանափակումը համահունչ է նաև ներկայումս ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված մի շարք դեպքերում առկա այն իրավակարգավորումների հետ, որով նախատեսված է, որ վարչական դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտն կայացվելու պահից օրինական ուժի մեջ է մտնում և վերաքննության և/կամ վճռաբեկության կարգով բողոքարկման ենթակա չեն:

Նախագծի ընդունմամբ ակնկալվող արդյունքը.

Նախագծի ընդունման դեպքում.

1. Էապես ավելի արագ և արդյունավետ կապահովվի ողջամիտ ժամկետներում որոշ վարչական գործերի քննության կարգը,
2. Կբացառվի ուշացած արդարադատության կայացումը,

3. Հատուկ շեշտադրում կդրվի մարդու և քաղաքացու՝ ներպետական և վերպետական օրենսդրությամբ երաշխավորված իրավունքների և ազատությունների արդյունավետ երաշխավորման վրա,
4. Էապես կբեռնաթափվեն ՀՀ վերաքննիչ վարչական և վճռաբեկ դատարանները:
5. Կապահովվի արդար դատաքննության իրավունքի անբաժանելի մաս կազմող գործի քննության ողջամիտ ժամկետը: